ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 259
*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը (Ճամբարակ քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Ճամբարակ համայնքի (Ճամբարակ քաղաքի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքը (Ճամբարակ քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-8 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի (Ճամբարակ քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 05-002-0050-0004 կադաստրային ծածկագրով 0.0009 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության այլ հողեր | 05-002-0050-0004 կադաստրային ծածկագրով 0.0009 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությամբ տրամադրված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության պահանջները (կցվում է):

4. Ճամբարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ճամբարակ քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի (Ճամբարակ քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |